



# Հայաստանի Հանրային Ամերիկյան առողջապահության Համալսարանի ֆակուլտետ

ք. Երևան, Մ. Բաղրամյան  
պողոտա 40  
Հեռ. (374 60) 61 25 92  
Էլ. հասցե: [mphinfo@aua.am](mailto:mphinfo@aua.am)  
Վեբ կայք: [www.sph.aua.am/](http://www.sph.aua.am/)  
[www.aua.am](http://www.aua.am)



AUA School of Public Health

## Հանրային առողջապահության մագիստրատուրա

### Ուսանողների ամենամյա ընդունելություն

Հանրային առողջապահության ֆակուլտետն առաջարկում է հանրային առողջապահության գծով երկամյա մագիստրոսական ծրագիր: Ծրագիրը ներառում է առողջապահության և հարակից ոլորտների փորձառու մասնագետների՝ առողջության և առողջապահական ծառայությունների հետազոտման, մատուցման, ինչպես նաև գնահատման վերաբերյալ կրթություն: Մեր շրջանավարտներն արդյունքում նպաստում են առողջության և առողջապահական ծառայությունների բարելավմանը Հայաստանում, Եվրոպայում, ի վերջո ողջ աշխարհում: Երկամյա ծրագիրն ավարտելուց հետո ուսանողները ստանում են հանրային առողջապահության մագիստրոսի աստիճան: Ծրագրի առաջնային նպատակն է հանրային առողջապահության և առողջապահական ծառայությունների կառավարման ոլորտներում մասնագետների պատրաստումը: Այն առաջարկում է առողջապահական ծրագրերի կառավարման, բնակչության առողջապահական կարիքների գնահատման համար անհրաժեշտ գիտելիքները զարգացնելու ինտեգրված մոտեցում՝ նպաստելով, որ այդ գիտելիքները բերեն առողջության բարելավում՝ համապատասխան ծրագրերի նախագծման, իրականացման և գնահատման միջոցով:

## Ընդունելության պահանջները

Ընդունելության համար դիմորդները պետք է բավարարեն հետևյալ պահանջներին՝

- ▶ Ներկայացնել ՀԱՀ մագիստրոսական կրթության ընդունելության ամբողջական դիմում-հայտ, ինչպես նաև դիմում-հայտի լրացման ուղեցույցում նշված անհրաժեշտ կից փաստաթղթերը գրանցվելով՝ [im.aua.am](http://im.aua.am) կայքում
- ▶ Ներկայացնել պաշտոնական TOEFL iBT նվազագույնը 79 կամ IELTS (Academic) նվազագույնը 6.5 միավոր. քննությունը պետք է հանձնել դիմում-հայտի լրացնելուց ոչ ավելի վաղ քան երկու տարի առաջ:
- ▶ Ներկայացնել նվազագույնը 50 percentile պաշտոնական միավոր GRE քանակական բաժնից. քննությունը պետք է հանձնել դիմում-հայտի լրացնելուց ոչ ավելի վաղ քան 5 տարի առաջ:
- ▶ Լինել բժշկական համալսարանի, ատամնաբուժության, կենդանաբուժության կամ դեղագործության ֆակուլտետների շրջանավարտ, կամ ունենալ բակալավրի աստիճան բուժքույրական գործից, հոգեբանությունից, կենսաբանությունից, սոցիոլոգիայից կամ հարակից որևէ ոլորտից: Ցանկալի է ունենալ մինչև 2 տարվա աշխատանքային փորձ առողջապահության ոլորտում:

## Հայաստանի ամերիկյան համալսարանի մասին (ՀԱՀ)

Որպես բարձրագույն ուսումնական հաստատություն՝ Հայաստանի ամերիկյան համալսարանն առաջարկում է կրթական և հետազոտական այնպիսի ծրագրեր, որոնք պատրաստում են ուսանողներին և հնարավորություն են տալիս դասախոսներին և հետազոտողներին արձագանքելու Հայաստանի և տարածաշրջանի կարիքներին՝ կայուն զարգացման տեսանկյունից: Այդ ամենը տեղի է ունենում ակադեմիական գերազանցությունը, անկեղծությունը, առաջնորդությունը և հասարակությանը ծառայելու ձգտումները գնահատող և զարգացնող միջավայրում:

## Համալսարանի ճիշտ ընտրությունը կարևոր որոշում է: Որո՞նք են ՀԱՀ-ի առավելությունները.

Ամերիկյան հավատարմագրում և միջազգային ճանաչում  
Ապահով և հյուրընկալ միջավայր  
Փորձառու միջազգային դասախոսական կազմ  
Տարածաշրջանային և գլոբալ կարիքների վրա հիմնված ժամանակակից ուսումնական ծրագրեր  
Միջազգային ուսանողական կազմ  
Բաց և թափանցիկ ընթացակարգերով համալսարան՝ ֆինանսական օժանդակության բազմաթիվ ծրագրերով Արդի և տեխնիկապես հագեցված լսարաններ  
Շրջանավարտների ցանց, որը ներառում է հասարակական կազմակերպությունների, բանկերի, համալսարանների, պետական կառուցների և ոչ-պետական կազմակերպությունների ղեկավար



### **Ֆինանսական օժանդակություն**

ՀԱՀ-ի ֆինանսական օժանդակության ծրագրերը ներառում են ուսման վարձի օժանդակությունը և կրթաթոշակները: Ուսման վարձի օժանդակության համար դիմորդները պետք է ներկայացնեն համապատասխան դիմում-հայտ ընդունելության դիմում հայտը ներկայացնելուց հետո: ՀԱՀ-ի քաղաքականությունը ենթադրում է, որ ոչ մի հայաստանի քաղաքացի, որն ընդունվել է ՀԱՀ չպետք է գրկվի այնտեղ կրթություն ստանալուց՝ զուտ ֆինանսական կարիքի պատճառով: Օտարերկրյա ուսանողները հնարավորություն ունեն դիմելու կրթաթոշակի, որը կարող է լինել ընդհուպ մինչև ուսման վարձի 50%-ը: Ֆինանսական օժանդակության մասին լրացուցիչ մանրամասների վերաբերյալ այցելեք <http://registrar.aua.am/financial-aid-definition/> .

### **Համագործակցություն**

Հանրային առողջապահության ֆակուլտետը համագործակցում է Ջոնս Հոփկինսի համալսարանի Բլումբերգի հանրային առողջապահության ֆակուլտետի հետ: Հանրային առողջապահության ֆակուլտետն անդամակցում է Եվրոպական տարածաշրջանի հանրային առողջապահության ֆակուլտետների ասոցիացիային, ինչը վկայում է ծրագրի որակի և աճող միջազգային ճանաչման մասին:

### **Հանրային առողջապահության ֆակուլտետի դասախոսական կազմը**

ՀԱՀ-ի հանրային առողջապահության ֆակուլտետում դասախոսների մեծամասնությունը կամ ստացել են իրենց դոկտորական աստիճանը, կամ էլ ներկայումս դասախոսում են Ջոնս Հոփկինսի համալսարանի Բլումբերգի հանրային առողջապահության ֆակուլտետում: Հանրային առողջապահության ֆակուլտետում դասավանդում են նաև դասախոսներ այնպիսի հայտնի համալսարաններից, ինչպիսիք են Միչիգանի համալսարանը, Փենսիլվանիայի համալսարանը, Կալիֆորնիայի համալսարանը Լոս Անջելեսում, Բլինդյուսի համալսարանը Չիկագոյում, Կոլումբիայի համալսարանը, Հյուսիսային Կարոլինայի համալսարանը և այլն:

### **Ծրագրի շրջանավարտները**

Հանրային առողջապահության մագիստրոսի ծրագրի շրջանավարտներն ապրում և աշխատում են աշխարհի ավելի քան 20 երկրներում: Ծրջանավարտների ավելի քան 85%-ն աշխատում է միջազգային կամ պետական կազմակերպություններում, օրինակ՝ ՀՀ Առողջապահության նախարարությունում, ՀՀ Ազգային Ժողովում, տեղական և միջազգային հասարակական կազմակերպություններում, Հայաստանի և այլ երկրների համալսարաններում: Ծրջանավարտների շուրջ 10%-ը շարունակում է կրթությունն այնպիսի հանրաճանաչ համալսարաններում, ինչպիսիք են Ջոնս Հոփկինսի համալսարանը, Փենսիլվանիայի համալսարանը, Տորոնտոյի համալսարանը և այլն:

### **Առողջապահական ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոն**

1995թ. հանրային առողջապահության ֆակուլտետում հիմնանդրվեց առողջապահական ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոնը՝ արձագանքելով հանրային առողջապահության միջդիսցիպլինար ոլորտի զարգացման և հետազոտական կարիքներին: Առողջապահական ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոնի նպատակներից մեկը ուսանողներին կենտրոնի կողմից իրականացվող տարբեր ծրագրերում ներառելու հնարավորությունն է: Առողջապահական ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոնի մասին տեղեկատվություն ստանալու համար այցելեք կենտրոնի վեբ կայք <http://auachsr.com/> .